ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «04» մարտի 2016թ.

ժամը՝ 13:20

2016թ-ի մարտի 4-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 49 հասցեում, տեղի ունեցավ ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնում կատարելու համար ստեղծված գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստը (այսուհետ՝ նիստ): Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արտակ Պողոսյան «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական հարցերով խորհրդական - նախագահ

Գայանե Սիմոնյան «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ – անդամ

Տաթև Վարդանյան «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ– անդամ

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Ա. Սիմոնյան «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների գործընթացի մասնագետ

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արտակ Պողոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Աննա Սիմոնյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց (այսուհետ՝ մասնակիցներ) մասին:

2. ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

3. ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 ծածկագրով պարզեցված ընթացակարգի առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին:

մասին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին.

1-ԻՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանը հանձնաժողովին հայտնեց, որ ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	<<Արման Ռոման եղբայրներ>> ՍՊԸ	ՀՀ Երևան, Ագաթանգեղոսի փ. 7/81

Որոշվեց՝

1. Աննա Սիմոնյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

1) Մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 պարզեցված ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ հրավեր) սահմանված կարգով.

2) Բացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը.

3) Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

3-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները.

Հ/Հ	Ծառայության անվանում	Մասնակցի անվանումը և առաջարկած գները /ՀՀ դրամ/			
		<<Արման Ռոման եղբայրներ>> ՍՊԸ			
		Ինքարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված գինը
1	«Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» 1 միջոցառման կազմակերպում	3200000	160000	-----	3360000
2	«Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» 2 միջոցառման կազմակերպում	4390000	219500	-----	4609500
3	«Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» 3 միջոցառման կազմակերպում	1780000	89000	-----	1869000
4	«Սփյուռքահայ ուսանողների և աշակերտների համար միջոցառումների կազմակերպում»	3520000	176000	-----	3696000
5	«Սփյուռքահայերի ինտեգրման միջոցառումների կազմակերպում»	2220000	111000	-----	2331000
6	«Սփյուռքահայ արվեստագետների միջոցառումների կազմակերպում»	1100000	55000	-----	1155000
7	«Հայաստանում բնակվող սիրիահայերի հիմնախնդիրների համար միջոցառումների կազմակերպում»	420000	21000	-----	441000
8	«Սփյուռքահայ ստեղծագործողների կայացման համար միջոցառումների կազմակերպում»	1650000	82500	-----	1732500

9	«Հայաստանյան մշակութային միջոցառումներին հեռավոր սփյուռքի հայ համայնքներում գործող թատերախմբերի, երգչախմբերի, անհատ կատարողների և արվեստագետների մասնակցություն, ժամանակակից նկարիչների անհատական ցուցահանդեսի կազմակերպում»	2540000	127000	-----	2667000
10	«Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրում» միջոցառման կազմակերպում	895000	44750	-----	939750
11	"Մեր մեծերը" խորագրով մշակութային միջոցառումների կազմակերպում	2350000	117500	-----	2467500

Որոշեցին՝

1. Որպես ՀՍԿ-ՊԸԾՁԲ-16/05 պարզեցված ընթացակարգով մրցույթ կատարելու ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել N 1-11 չափաբաժինների մասով << Արման Ռոման եղբայրներ >> ՍՊԸ –ին:

2. Առաջարկել հանձնաժողովի քարտուղար Ա. Սիմոնյանին՝

2.1 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

2.2 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

4-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ժամը 13:20-ին Հանրապետության 49/9 հասցեում, ՀՀ Ֆինանսների նախարարությունից համապատասխան եզրակացության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան մինչև 2016թ. մարտի 14-ը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Պողոսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Սիմոնյան _____

Տ. Վարդանյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սիմոնյան _____